# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՆՈՐՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 3 | Մաքսային մարմնի արական սեռի հանրային ծառայողի ձմեռային տաբատ Մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի, գնդապետի, փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների ձմեռային տաբատը (Նկար 27) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) կտորից է՝ ուղիղ ուրվագծով, առաջամասում՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) շղթայով, 14 մմ տրամագծով մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակով և մետաղական կեռիկով կոճկվող: Առաջամասում՝ 17 սմ բացվածքով 2 կողային գրպան, հետնամասի աջ կողմում՝ 14 սմ բացվածքով, 6 սմ լայնությամբ կափույրով ուղիղ գրպան: Կողագծերը և գրպանի կափույրը՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Գոտու լայնությունը՝ 4 սմ, 1 սմ լայնությամբ 6 գոտեմակօղերով: Գոտու ներսի հատվածում՝ պիտակ (Նկար 87): Տաբատի կտորը՝ ռիպստոպ տեսակի, 44 տոկոս բրդի, 54 տոկոս Պ/Է և 2 տոկոս լայկրայի խառնուրդ՝ 235 գր/քմ ±5% խտությամբ, աստառը մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG)՝ պոլիէսթերի ատլասից: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: *** Յուրաքանչյուր համազգեստի վրա պետք է լինի համապատասխան պիտակ, որի վրա պետք է նշված լինի կտորի կամ գործվածքի բաղադրությունը (տոկոսային հարաբերակցությամբ) և ապրանքի խնամքի առանձնահատկությունները (պատկերների կամ մակագրությունների տեսքով): **** 1-ից - 4-րդ, 6-ից – 11-րդ չափաբաժիններով նախատեսված |

| | |
|---|---|
| | յուրաքանչյուր ապրանք պետք է ունենա առանձին փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի անվանումը, չափսը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: ***** 5-րդ և 12-րդ չափաբաժինները՝ կոշիկների յուրաքանչյուր զույգը պետք է լինի առանձին ստվարաթղթե տուփով, որի վրա պետք է նշված լինի անվանումը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, չափսը: ****** Յուրաքանչյուր համազգեստի այն տեսակը, որի վրա առկա է կոճակ պետք է ունենա միևնույն կոճակից մեկական պահեստային օրինակ, որը պետք է ներսի կողմից պիտակով ամրացած լինի տվյալ համազգեստին: ******* Յուրաքանչյուր ապրանք, ըստ սեռերի, չափսերի և/կամ կոչումների, պետք է լինի առանձին պոլիէթիլենային փաթեթավորմամբ: ******** 1-ից – 4-րդ ,6-ից – 11-րդ չափաբաժիններով նախատեսված չափաբաժինների համար Մատակարարը պետք է իր միջոցների հաշվին ներկայացնի Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված, հավաստագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված երեսացուի գործվածքի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության և աստառի բաղադրության վերաբերյալ եզրակացություն: ********* Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցման ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ որպես նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերի նմուշները՝ ամրացված Ա4 չափի գծագրական թղթի (ստվարաթղթի) վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է Մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասնագիտական խմբի կողմից՝ ներկայացնելուց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: ********** Մաքսային մարմնի հանրային ծառայողների կոչումների քանակը, համազգեստի և բաղկացուցիչ պարագաների չափսերը, լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, Մատակարարի էլ.փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: *********** Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 17-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1980-Ա որոշման դրույթներից, որում ներառված են յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրում համապատասխան համարնով նշված նկարները, ինչպես նաև համազգեստի բաղկացուցիչ մաս կազմող մաքսային մարմնի հանրային ծառայողի տարբերանշանների տեխնիկական բնութագրերը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

НОРО ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 3 | |